ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, ՀՀ Նախագահի հրամանագրով, ՀՀ կառավարության որոշումներով ու իրավական ակտերով՝ Գեղարքունիքի մարզպետարանը 2017 թվականի ընթացքում որոշակի աշխատանքներ է կատարել մարզի կենսագործունեության ապահովման, մարզի առջև ծառացած սոցիալ-տնտեսական հիմնահարցերի լուծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, կյանքի որակի բարելավման ուղղություններում:

2017 թվականին էական ձեռքբերումներ են արձանագրվել մի շարք ոլորտներում:

Կրթության ոլորտում

2017-2018 ուսումնական տարում մարզում գործել են մարզային ենթակայության 89 միջնակարգ, 26 հիմնական, 2 տարրական, 1 հատուկ դպրոցներ, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության՝ 1 կրթահամալիր և 6 ավագ դպրոցներ, 1 հիմնադրամ: Մարզում չեն եղել հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ: Առանձնակի ուշադրություն է դարձվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դպրոց ընդգրկելու ուղղությամբ, որի արդյունքում շուրջ 250 երեխաներ ապահովվել են հագուստով և գրենական պիտույքներով ու հաճախել դպրոց:

2017-2018 ուսումնական տարում/ սեպտեմբերի դրությամբ/ մարզային ենթակայության դպրոցներում փաստացի կոմպլեկտավորվել է 1438,0 դասարան 26957 աշակերտով, Գավառի N 1 հատուկ դպրոցում կոմպլեկտավորվել է 6,0 դասարան՝ 40 աշակերտով: Սևանի N3 հիմնական դպրոցում կոմպլեկտավորվել է ռուսերեն ուսուցմամբ 4 դասարան՝ 24 աշակերտով: ՀՀ ԿԳՆ ենթակայության 1 կրթահամալիրում և 6ավագ դպրոցներում, Ծաղկունքի բաց դպրոցում կոմպլեկտավորվել են 85 դասարան՝1451աշակերտներով: Մարզային ենթակայության դպրոցների առաջին դասարան են ընդունվել 2890աշակերտ:

2017-2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում/ հունվար/ մարզի հանրակրթական դպրոցներում փաստացի սովորում են 28328 աշակերտ, /որը կիսամյակի սկզբի համեմատ պակաս է 119 աշակերտով/՝ այդ թվում՝

- .Մարզային ենթակայության դպրոցներում 26870 աշակերտ,
- .ԿԳՆ ենթակայության դպրոցներում 1458 աշակերտ

Մարզային ենթակայության դպրոցների աշակերտների միջին առաջադիմությունը 1-ին կիսամյակում կազմել է 98.18%, որակը՝ 47.58%:

Աշակերտների միջին խտությունը մարզում կազմում է՝ 18.5, աշակերտ ուսուցիչ հարաբերակցությունը՝ 9:

2016-2017 ուսումնական տարվա ավարտին մարզային ենթակայության 117 դպրոցներում սովորել են 26719 աշակերտ: Անհրաժեշտ պայմաններ են ապահովվել հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար: Նկատելիորեն բարելավվել են Գավառի N 1 հատուկ դպրոցում ընդգրկված աշակերտների ուսման, սննդի և գիշերելու խնդիրները: Որոշակի աշխատանք է կատարվել նաև ներառական կրթության առումով, ներկայումս ներառական կրթություն է իրականացվում 6 դպրոցներում: 2016-2017 ուստարում դպրոց հաճախող աշակերտներից գերազանցիկներ են՝ 5676-ը (23.9%), հարվածայիններ են՝ 6509-ը (27.45%),միջակ առաջադիմություն ունեն՝ 11476-ը (48.39%), իսկ 50-ը՝ (0.21%) ունեն անբավարար գնահատական: 12-րդ դասարան ավարտել և միջնակարգ կրթության ատեստատ են ստացել 1481 աշակերտներ, որից 3-ը՝ դրսեկ: 12-րդ դասարանի 3 աշակերտ պարգևատրվել են <<Գերազանցության մեդալով>> / 2 աշակերտ՝ Մանե Հարոյանը և Միլենա Տոնեյանը՝ Զոլաքարի N1 միջնակարգ դպրոցից և 1-ը՝ Զոհրաբ Խաչատրյանը՝ Ներքին Գետաշենի N1 միջնակարգ դպրոցից/:

2017-2018 ուսումնական տարվա 12-րդ դասարանում սովորում են 628 աշակերտներ, որոնցից մեդալի հավակնորդներ են ներկայացվել 3 աշակերտներ՝ Ներքին Գետաշեն գյուղի N1 միջնակարգ դպրոցից՝ Հեղինե Արթուրի Գրիգորյանը, Զոլաքար գյուղի N1 միջնակարգ դպրոցից՝ Ծաղիկ Կարենի Տոնեյանը և Լիճք գյուղի միջնակարգ դպրոցից՝ Էմմա Արկենդիկի Վարդանյանը:

9-րդ դասարանի աշակերտներից ավարտական վկայականներ են ստացել 2200-ը (որից 139-ը՝գերազանցության վկայականներ): Մարզի դպրոցների աշակերտների միջին առաջադիմությունը կազմում է 99.78 %, որակը՝ 51.38%:

Որոշակի աշխատանք է տարվել դպրոցները մանկավարժական կադրերով համալրելու ուղղությամբ: 2017թ. ընթացքում առաջացած մանկավարժական թափուր տեղերը համալրվել են մրցութային կարգով և 52 դպրոցներում անցկացված մրցույթների արդյունքում նշանակվել են 59 ուսուցիչներ, իսկ 2018թ. ընթացքում՝ 16 դպրոցներում անցկացված մրցույթների արդյունքում նշանակվել են 18 ուսուցիչներ:Սահմանամերձ մի շարք դպրոցների ուսուցչի թափուր տեղերի զբաղեցման համար դիմորդներ չեն եղել: Տարվա ընթացքում կազմակերպվել են <<Լավագույն ուսուցիչ, տնօրեն, դաստիարակ>>, Հայ առաքելական եկեղեցու և ՀՀ ԿԳՆ համատեղ իրականացվող՝ 5 առարկաների գծով <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Հայաստանում ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ>>, <<Նախնական զինվորական պատրաստականություն առարկայի լավագույն ուսուցիչ>> մրցույթները և ապահովվել հաղթողների տվյալների ներկայացումը ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Հանրակրթական հաստատություններում սովորողների ուսուցման գործընթացի անխափան կազմակերպման համար հատուկ ուշադրություն է դարձվել դպրոցական շենքերի շահագործմանը և պահպանմանը, ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել են ՝ Զոլաքարի N2 միջնակարգ (49մլնդրամ), Սևանի N1 հիմնական (78,5 մլն դրամ), Սևանի N6 հիմնական (12,6 մլն դրամ), Վարսերիմիջնակարգ (10,4 մլն դրամ), դպրոցական շենքեր, իսկ 14 դպրոցներ իրենց տնտեսված միջոցների հաշվին, շուրջ 69,5 մլն. դրամի սահմաններում կատարել են վերանորոգման աշխատանքներ: Շարունակում են հիմնախնդիր մնալ վթարային վիճակում գտնվող Գեղհովիտի N 2 մ/դ, Վ. Գետաշենի N 2 մ/դ, Լիճքի հ/դ դպրոցական շենքերի հիմնանորոգումը, դպրոցները լաբորատոր սարքավորումներով ու նյութերով ապահովումը (ապահովված են միայն 11 դպրոցներ):Աշխատանք է տարվել ջեռուցման ապահովման ուղղությամբ, որի արդյունքում հաստատությունները նախընտրած վառելիքով կազմակերպել են շենքերի ջեռուցումը. 66 դպրոց օգտագործել է գազ, 12-ը՝ էլեկտրաէներգիա, 40-ը՝ հեղուկ վառելանյութ, իսկ ներկայումս աշխատանքներ են տարվում բոլոր դպրոցները՝ գազով կամ էլեկտրաէներգիայով ջեռուցելու ուղղությամբ:

2017 թվականին համայնքային սեփականություն հանդիսացող 8 նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքեր նույնպես հիմնանորոգվել են: Մարզի 57 համայնքներից 28-ում կան 47 մանկապարտեզներ: 2017 թվականին մանկապարտեզներ են բացվել Դդմաշեն,Չկալովկա, Գեղամասար (Սոթք և Տրետուք բնակավայրեր),Ճամբարակ (Մարտունի բնակավայր) համայնքներում: Գործող 47 մանակապարտեզներից 26-ը գործում է շուրջտարի, իսկ 21-ը՝սեզոնային: Մարզում գործող 47 նախադպրոցական հաստատությունների 116 խմբերում հաճախումեն 3520 երեխաներ:

Մարզի ևս 6 ուսումնական հաստատություններում 2017 թվականի ընթացքում բացվել են նախակրթարաններ: 2017 թվականի դրությամբ լիցենզավորվել են 41 դպրոցահեն նախակրթարաններ և 7 նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

Անհրաժեշտ աշխատանքներ են իրականացվում նախակրթարանների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների լիցենզավորման գործընթացը ավարտին հասցնելու համար:Մարզում գործում են 1 նախնական մասնագիտական /արհեստագործական / և 9 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:

ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանների և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշումների համաձայն՝ կազմակերպվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաների ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը:

Մարզի 125 հանրակրթական դպրոցներից 123 դպրոցների 7864 աշակերտներ 2016թ. Դեկտեմբեր-2017թվականի փետրվար ամիսներին մասնակցել են ներդպրոցական փուլին, որից յոթառարկաների գծով՝առցանց/օնլայն եղանակով/, տարածքային փուլին երաշխավորված 2914 աշակերտներից փաստացի մասնակցել են 2583 –ը, որոնցից մարզային փուլին երաշխավորվել են 636-ը: Մարզային փուլին 16 առարկաներից մասնակցեցին 496-ը, որոնցից հանրապետական փուլին երաշխավորվեցին 74 աշակերտներ: Հանրապետական փուլին երաշխավորված 74 աշակերտներից մասնակցել են՝ 72-ը: Մասնակցած աշակերտներից 14-ը ստացել են դիպլոմներ, 10-ը՝ գովասանագրեր, իսկ <<ՆԶՊ>> առարկայից մարզի թիմը հանրապետությունում գրավել է վեցերորդ տեղը, իսկ 2017թ. դեկտեմբեր-2018թվականի փետրվար ամիսներին մարզի հանրակրթական դպրոցներից 122 դպրոցների 7553 աշակերտներ մասնակցել են ներդպրոցական փուլին, որից յոթ առարկաների գծով՝առցանց/օնլայն եղանակով:Ներկայումս ընթացող հանրապետական փուլում 11 աշակերտներ ստացել են դիպլոմներ և գովասանագրեր:

Կազմակերպվել են ՀՀ Աժ գավաթի խաղարկության, շարադրությունների մրցույթներ, նկարչական ցուցահանդեսներ, երաժշտական փառատոներ, ազգային տոներին, հոբելյանական տարելիցներին նվիրված հանդիսություններ, ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում կազմակերպվող միջոցառումներ, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղեր, որոնք նպատակաուղղվել են սովորողների մեջ հայրենասիրության արմատավորմանն ու խորացմանը, ուսման որակի և արդյունավետության բարձրացմանը: Աժ գավաթի խաղարկության եզրափակիչ փուլում մարզի հավաքական թիմը գրավեց 4-5րդ տեղը:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ՀՀ դպրոցների 5-6-րդ դասարանների աշակերտների շրջանում անցկացված սպորտլանդիայի ՀՀ Գեղարքունիքի մարզային փուլում հաղթող ճանաչվեց Սևանի N1 հիմնական դպրոցի թիմը:

Որոշակի աշխատանքներ են իրականացվել մարզի ուսումնական հաստատություններում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման ուղղությամբ:Ապահովվել է ՀՀ հանրակրթական ավագ դպրոցների աշակերտների մասնակցությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ռազմամասնագիտական կողմնորոշման վերաբերյալ հանդիպմանը:

Կազմակերպվել են <<Դիպուկ հրաձիգ>> մրցույթի և <<Կորյուն>> ռազմամարզական խաղերի ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը: <<Դիպուկ հրաձիգ>> մրցույթի մարզայինփուլում հաղթող ճանաչված Զոլաքարի N 1 միջնակարգ դպրոցի թիմը հանրապետական փուլում գրավեց 4-րդ տեղը, իսկ <<Կորյուն>> ռազմամարզական խաղերում մարզային փուլում հաղթող ճանաչվեց Զոլաքարի N2 միջնակարգ դպրոցի թիմը:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի ներդպրոցական փուլին մասնակցել են 118 դպրոցների շուրջ 2900 աշակերտներ: Մարզային փուլում հաղթող ճանաչված Ճամբարակի ավագ դպրոցի թիմը մասնակցեց եզրափակիչ փուլին՝ գրավելով 3-րդ տեղը: 2017 թվականին վերապատրաստվել և ատեստավորվորել են 524 ուսուցիչներ:

2018 թվականին վերապատրաստման են ներկայացվել 567 ուսուցիչներ:

2017 թվականին մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժներից որակավորման տարակարգ են ստացել ընդամենը 80 ուսուցիչներ, 2018 թվականին՝ 5 ուսուցիչներ :

Մարզային ենթակայության բոլոր ուսումնական հաստատությունները ապահոված են ինտերնետ կապով: 2016-2017 ուստարում մարզի հանրակրթական հաստատություններում աշխատել են 4504 մարդ, որոնցից 3061-ը՝ ուսուցիչներ : Աշակերտ-ուսուցչական դրույք հարաբերակցությունը 11.1 է,դասարանների միջին խտությունը՝ 18,3 է, ուսուցիչների միջին աշխատավարձը կազմել է 117400 դրամ:Բոլոր մանկավարժների աշխատավարձը հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված կարգով և վճարվել ժամանակին:

Մարզի կրթության ոլորտի հաստատուն ծախսերի նպատակային ծախսման նպատակով, դեռևս 2017 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ, մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում, բազմահամակազմ դասարանների ձևավորման արդյունքում կոմպլեկտավորվել են 20

հատ 0,5-ական, 132 երկկոմպլեկտ, 9 եռակոմպլեկտ և 2 քառակոմպլեկտ դասարաններ, կրճատվել է մոտ 4376 դասաժամ (կամ 199 ուսուցչական դրույք), որի արդյունքում, միջին հաշվով տնտսվել է մոտ 191 մլն դրամ: Շարունակելով ներդպրոցական օպտիմալացումը, 2017 թվականի դեկտեմբեր-2018 թվականի հունվար ամիսներին կատարված կրճատումների արդյունքում 2018 թվականի հունվարի 8-ի դրությամբ մարզային ենթակայության դպրոցներում կրճատվել է ոչ ուսուցչական 186.35 դրույքային միավոր/ 102 անձ/ կամ ֆինանսական արտահայտությամբ տարեկան տնտեսվելու է շուրջ 193749,4 հազ. դրամ:

2017թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել են 4 դպրոց՝ 150.9 հազ. դրամ / այդ թվում՝ Սևանի N1 հ/դ՝78.5 հազ. դրամ, Սևանի N 6 մ/դ՝12.86 հազ. դրամ, Վարսերի մ/դ՝10.44 հազ. դրամ, Զոլաքարի N2 մ/դ՝49.1 հազ. դրամ/ իսկ դպրոցների տնտեսած միջոցներով վերանորոգվել և գույք են ձեռք բերել 26 դպրոց՝ 104677.3 հազ. դրամ:

Մշակույթի ոլորտում

Գեղարքունիքի մարզում գործում 2017 թվականին գործել է 171 մշակույթային օջախ, որից հանրապետական ենթակայության՝5, մարզային ենթակայության՝ 2 համայնքային ենթակայության՝ 164 հաստատություն: Գավառում շահագործման է հանձնվել Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոնի նորակառույց շենքը, իսկ ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել են Սևանի, Ձորագյուղի և Զովաբերի մշակույթի տները:
Մարզի 13 երաժշտական և արվեստի դպրոցներ ընդգրկված են <<Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային, փողային նվագարանների ուսուցում>> ծրագրում, որից օգտվում են 170 երեխաներ: Մարզային և հանրապետական միջոցառումներին իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել Վարդենիսի մշակույթի տան ժողգործիքների անսամբլը, Սևանի մշակույթի տան <<Սևան>>պարային, Գագարինի <<Հայորդի>> ժողովրդական պարերի, Վերին Գետաշենի մշակույթի տան <<Ալաշկերտ>>, Լիճքի մշակույթի տան <<Լիճք>>, Ներքին Գետաշենի մշակույթի տան <<Մուշ>>, Զոլաքարի մշակույթի տան <<Բագրևանդ>>, Ճամբարակի մշակույթի տան <<Արփի>>, Ծովասարի մշակույթի տան <<Ալաշկերտ>> , <<Քյավառ>> հեռուստաընկերության <<Դարույնք>> ազգային-ազգագրական երգի-պարի համույթները, Ձորագյուղ համայնքի <<Մշո հավքեր>> ազգագրական երգի-պարի անսամբլը: Կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, ծեսերին, անցկացվել են ուղտագնացություններ: Համայնքներում անցկացվել են ժողովրդական ժողովրդական վարպետների ստեղծագործությունների ցուցահանդեսներ: ՀՀ մշակույթի նախարարության <<Մշակութային կանգառ>> ծրագրի շրջանակներում մարզում կազմակերպվել է 39 համերգային ծրագրեր, թատերական ներկայացումներ և կինոցուցադրություններ:

Սպորտի ոլորտում

Մարզի տարածքում գործում են 9 մանկապատանեկան մարզադպրոց: Մարզում առկա է 3 մարզադաշտ՝ Վարդենիս,Մարտունի և Լճաշեն համայնքներում: Գավառ, Ծովակ և Սևան համայնքներում գործում են մինի ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի արհեստական խոտածածկով խաղադաշտեր: Բակային սպորտի զարգացմանն ուղղված որոշակի ծրագրեր են իրականացվել Գավառ, Մարտունի և Սևան քաղաքներում: Սևան քաղաքի 5-րդ միկրոթաղամասում կառուցվել է բազմաֆունկցիոնալ մարզահրապարակը՝ մոսկվաբնակ բարերար Խաչիկ Կարապետյանի ֆինանսական միջոցներով, որը ներկայացվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ» ստուգատեսին և արժանացել է 2-րդ մրցանակի: Մարզադպրոցներում գործում է 148 խմբակ, հաճախում են 1728 մարզիկներ: Կազմակերպվել են տարաբնույթ մարզական մասսայական միջոցառումներ՝ <<Ֆիզկուլտուրայի օր>>, <<Օլիմպիական օր>>, կրոսավազք, հեծանվային արշավ, <<Գեղարքունյաց ձմեռ>>, սպորտլանդիաներ, մարզի 5 քաղաքներում՝

մարզական փառատոներ , ֆուտբոլի, շախմատի, ըմբշամարտի, ծանրամարտի, աթլետիկայի, վոլեյբոլի, բռնցքամարտի առաջնություններ, միջազգային մրցաշարեր՝ հարևան մարզերի, ԼՂՀ ,Վրաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Իրանի Իսլամական Հանրապետության մարզիկների և թիմերի մասնակցությամբ: Անցկացվել են Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>>, <<Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն>>, <<Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն>>, <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթների, <<Լավագույն մարզական բակ>>, <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> և <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> հանրապետական ստուգատեսների տարածքային և մարզային փուլերը: <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի եզրափակիչ փուլում մարզի հավաքական թիմը գրավել է 4-րդ տեղը, <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթում՝ 3-րդ տեղը:

Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման ու ՀՀ ֆինանսների նախարարությունների կողմից սահմանված կարգով ու ժամկետներում մշակվել են մարզային ենթակայության բյուջետային կազմակերպությունների 2018-2020թթ. պահպանման ծախսերի նախագծերը, բյուջետային հայտերի տեսքով խմբավորվել և ներկայացվել են ՀՀ կառավարություն ու համապատասխան նախարարություններ: Սահմանված ժամկետում ներկայացվել է հանրակրթական դպրոցների աշակերտների թվի հաշվետու տարվա ճշտված ծախսերի անհատական և ամփոփ նախահաշիվները ցանցային ցուցանիշներով: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված մեթոդական ցուցումների համաձայն՝ կազմվել են բյուջետային հայտերը և ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:
Ապահովվել է մարզպետարանի մասնակցությունը մարզային ենթակայության բյուջետային կազմակերպությունների 2017թ. պահպանման ծախսերի նախահաշիվների կազմման, տնտեսագիտական դասակարգման հոդվածների փոփոխությունների կատարման, ինչպես նաև գանձապետական բաժանմունք-բյուջետային կազմակերպություն հարաբերությունների կարգավորմանը: Մարզպետարանում և տարածաշրջաններում կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ, տրվել են պարզաբանումներ և մեթոդական օգնություն պետական բյուջեից տրվող միջոցների նախատեսման, նպատակային օգտագործման, ֆինանսական կարգապահության պահպանման հարցերի պարզաբանման վերաբերյալ:
Ընտրանքային կարգով բյուջետային կազմակերպություններում կազմակերպվել են ուսումնասիրություններ ֆինանսական կարգապահության պահպանման և պետական բյուջեից հատկացված միջոցների նպատակային ծախսումների ուղղությամբ: ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից սահմանված կարգով ու ժամկետներում կազմակերպվել է մարզի 91 համայնքների գույքահարկի և հողի հարկի գծով ելակետային տվյալների, համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքներ բյուջեների եկամուտների կորուստների հաշվարկման հիմքում դրվող ելակետային տվյալների հավաքագրման, ամփոփման, ճշգրտման աշխատանքները:
ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա տրամադրելու նպատակով մարզի տարածքում տեղաբաշխված համայնքներից հավաքագրվել են համապատասխան հայտեր, ամփոփվել և ժամանակին ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն: Մարզի համայնքներում անցկացվել են խորհրդակցություններ և ցուցաբերվել մեթոդական ու խորհրդատվական օգնություն հաշվապահական հաշվառման վարման կարգի, ինչպես նաև հնարավոր փոփոխությունների ու լրացումների մասին: Մեթոդական ցուցումներ են տրվել մարզային ենթակայության կազմակերպություններին՝ գնումների գործընթացը գործող օրենքով կազմակերպելու նպատակով: Պետության կողմից Գեղարքունիքի մարզպետարանին, մարզային ենթակայության հիմնարկներին ու համայնքներին տրվող սուբվենցիաները հատկացվել են գրեթե ամբողջությամբ: Տեղական

բյուջեների սեփական եկամուտները 2017 թվականին հավաքագրվել են 101,7 տոկոսով կամ պլանավորված 1 միլիարդ 493 միլիոն 221 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 1 միլիարդ 519 միլիոն 244 հազար դրամ:

Գյուղատնտեսության ոլորտում

Մարզում ձևավորվել և գործում են 63000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ:Մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 357211.0 հա, որից՝ 81712.0 հա վարելահողեր, 34712.4 հա խոտհարքներ, 179581.4 հա արոտներ, 34.5 հա բազմամյա տնկարկներ և 46257.9 հա այլ հողատեսքեր: 81712.0 հա վարելահողերից մշակվում է 57540.8 հա, չմշակվող վարելահողերը կազմում են 24171.2 հա: Հաշվի առնելով ցանքաշրջանառության բազան, որը պետք է կազմի վարելահողերի շուրջ 30 %-ը, մարզում վարելահողերի, արոտների և խոտհարքների նպատակային օգտագործման մակարդակը բարձր է:
2017թվականին <<Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> ծրագրի <<Համայնքի արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ-2>> բաղադրիչի շրջանակներում մարզի թվով 25 համայնքներ ձեռք են բերել գյուղատնտեսական տեխնիկա և գյուղ. գործիքներ, 14 համայնքներում կառուցվել է 69 կմ. ջրագիծ, 35 հատ խմոց,5 փարախ, 4 հովվի տնակ: 16 համայնքների արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 200 միավոր գյուղտեխնիկա՝ 42 անիվավոր տրակտոր, 158 միավոր այլ գյուղգործիքներ: 25 համայնքի համար ավարտվել են կերահանդակների քարտեզագրման և արածեցման սխեմաների մշակման աշխատանքները: 28 համայնքներում հիմնադրվել են << Համայնքի արոտօգտագործողների միավորում >> սպառողական կոոպերատիվներ:
Ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում մարզի համայնքները ձեռք են բերել 14 տրակտոր, 2 հացահատիկահավաք կոմբայն և 40 գյուղգործիքներ: ՀՀ Կառավարության 2017 թվականի մարտի 9-ի N 216-Ն որոշմամբ մարզի գյուղացիական տնտեսություններին է հատկացվել ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորված 25.9 տոննա գարնանացան ցորենի սերմացու, կատարվել է 103.5 հա ցանք: 2017թվականին պետական աջակցությամբ մարզի գյուղացիական տնտեսություններին հատկացվել է 4965.7 տոննա ազոտական , 41.1 տոննա ֆոսֆորական և 69.45 տոննա կալիումական պարարտանյութեր, 663724 լիտր դիզելային վառելանյութ , որից օգտվել են 2180շահառու: 2017թ.գյուղատնտեսական տարում ստացված համախառն բերքը կազմել է՝ հացահատիկ՝ 44639 տ,կարտոֆիլ՝ 213884տ, բանջարեղեն՝ 38754 տ, պտուղ՝ 12664 տ: Մարզում անասնաբուծական հիմնական մթերքների 2017թ. արտադրության ցուցանիշները հետևյալն են՝ միս՝ 30.4 հազ. տ, կաթ՝ 142.5հազ. տ, ձու՝ 63.1 մլն հատ: Այսպիսով, բուսաբուծական և անասնապահական մթերքների իրացումից ստացված համախառն արտադրանքը կազմել է 123.8 մլրդ. դրամ, նախորդ տարվա 153 մլրդ. դրամիդիմաց, նվազել է 29 մլրդ. դրամ, կապված անբարենպաստ բնական պայմանների հետ/երաշտ, կարկուտ:
2017թ. ջրօգտագործողների հետ կնքվել են 12035 պայմանագիր՝ 3040 հա ոռոգելու համար: Տրված ջուրը կազմել է 8043.8 հազ. մ3 ջրտուք, ոռոգման ջրի վարձավճարների գանձումը հասցվել է մինչև 94 տոկոսի՝ 01.29.2018թ. դրությամբ:
2017թ. գարնանը մարզին հատկացված մկնանման կրծողների դեմ պայքարի համար 843 կգ. «Ռոդիֆակում- Ս,, տեսակի մկնասպան թունանյութը մարզպետարանի կողմից ստացվել և բաշխվել է մարզի թվով 49 համայնքներին՝10537.5 հա տարածքում միջոցառումներ իրականացնելու համար: Միջոցառումներն իրականացվել են ամբողջությամբ:Մարզի թվով 90 համայնքներում իրականացվել է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդություններով և վնասատուներով վարակվածության աստիճանի ուսումնասիրություն՝ 23650 հեկտարի վրա: 2017թ. պետական բյուջեի միջոցների հաշվին մարզի գյուղատնտեսական կենդանիների նկատմամբ իրականացվել են հակաանասնահամաճարակային և ախտորոշիչ միջոցառումներ դաբաղ, բրուցելյոզ, տուբերկուլյոզ, սիբիրախտ, մոդուլյար մաշկաբորբ, խշխշանպալար հիվանդությունների դեմ: Շողակաթ համայնքում

հիմնադրվել է 10 հա կաթիլային ոռոգմամբպտղատու այգիներ / ծիրանենի/ , ևս 40 հա այգիների հիմնադրման աշխատանքները ընթացքի մեջ են:
Գյուղվարկեր ստանալու նպատակով բանկեր դիմած անձանցից վարկ են ստացել 39 մարդ, որից 33-ը ստացել են մինչև 5 մլն դրամ , իսկ 6-ը՝ 5 մլն և ավելի դրամ:
<< Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի >> շրջանակներում մարզում ընդհանուր տրամադրվել է 132 մլն 100 հազար դրամ վարկ:

Բնապահպանության ոլորտում

2017թ. կատարվել են 90 հա անտառամաքրման աշխատանքներ՝ շուրջ 125.4 մլն.դրամի չափով և 8 հա անտառավերականգնման աշխատանքներ՝ 7մլն. դրամի չափով: 2017 թվականին Սևանա լճի ձկնային պաշարների հաշվառումը կազմել է մոտ 7 մլն.դրամ: "Սևանի իշխան" ՓԲԸ -ի կողմից Սևանի իշխանի վերականգնման և ձկնաբուծության զարգացման նպատակով կատարվել է ներդրում շուրջ 597մլն. դրամի չափով: 2017թվականին մարզի տարածքում փաստագրված 138 ապօրինի աղբավայրերից լիկվիդացվել են 100 աղբավայրեր, մնացած 38-ից 29-ը կառավարության որոշմամբ հաստատված աղբավայրեր են, իսկ մնացած 9-ը ենթակա են փակման: <<Հայաստան ծառատունկ>> ծրագրերի շրջանակներում մարզի մի շարք համայնքներում տնկվել են շուրջ թվով 3250 հատ դեկորատիվ ծառեր: 2017 թ. Մարտունի քաղաքային համայնքում բացվել է հանրային լողափ, իսկ Ծովագյուղ համայնքի վարչական տարածքի հանրային լողափի շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են:

Հողաշինարարության և հողօգտագործման ոլորտում

2017թ.-ին մարզի համայնքներում վարձակալության են տրամադրվել 60 հազար հեկտար համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասեր: 2018թ.հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված 173.7 մլն. դրամ վարձավճարի դիմաց գանձվել և մուտքագրվել է 159.1 մլն. դրամվարձավճար /91.6%/: 2017թ մարզի 27 համայնքներում կատարվել են ուսումնասիրություններ պետական և համայնքային սեփականության հողամասերի օտարման, օգտագործման տրամադրման, հետ վերցնելու օրինականության ապահովման ուղղությամբ: Ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները քննարկվել են մարզպետի խորհրդակցություններում և մարզխորհրդի նիստերում: Համապատասխան որոշումներում ու արձանագրություններում՝ համայնքների ղեկավարների գործունեությանը տրվել է գնահատական և կոնկրետ ցուցումներ ու հանձնարարականներ թերությունների վերացման համար: Տեսչական ստուգումների արդյունքում 5 համայնքների ղեկավարներ ենթարկվել են վարչական տուգանքների՝ 750.0 հազ. դրամի չափով:
2017թ. ընթացքում մարզի 28 համայնքներում օտարվել են 295 միավոր՝ 121.63 հա հողատարածք, համայնքների բյուջե է մուտքագրվել 177.2 մլն. դրամ: Օտարման միջին արժեքը կազմել էսահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 259%-ը:
Հողերի օգտագործման սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել բնակավայրերի գլխավոր հատակագծերի և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների փոփոխության 35 առաջարկներ, որոնց տրվել են դրական եզրակացություններ: Սահմանված կարգով փոխվել են բջջային կայանների, Իրան-Հայաստան 220 և 400 կվ էլեկտրահաղորդման օդային գծերի հենասյունների և ֆոտովոլտային արևային կայանների կառուցման համար անհրաժեշտ հողամասերի նպատակային նշանակությունները:

Քաղաքաշինության ոլորտում .

ՀՀ պետական բյուջեից հատկացված 176.5 մլն դրամով մարզում իրականացվել են հետևյալ ծրագրերը՝ Զոլաքար համայնքի N 2 միջնակարգ դպրոցի հիմնանորոգում /շարունակություն/- 49.0 մլն

դրամ, Սևան քաղաքի N 1 հիմնական դպրոցի հիմնանորոգում /շարունակություն/ - 78.5 մլն դրամ, Սևան քաղաքի մշակույթի տան հիմնանորոգում/շարունակություն/ - 49.0 մլն դրամ: ՀՀ կառավարության որոշումներով մարզին հատկացված 321.2 մլն դրամով իրականացվել են թվով 19 օբյեկտների շինարարական աշխատանքներ, որոնք են՝ Ծովազարդ համայնքի մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցում - 6.9 մլն դրամ, Երանոս համայնքի մանկապարտեզի հիմնանորոգում - 11. մլն դրամ, Լանջաղբյուր համայնքի մանկապարտեզի հիմնանորոգում - 12.7 մլն դրամ, Լճաշեն համայնքի մանկապարտեզի հիմնանորոգում - 19.6 մլն դրամ, Ձորագյուղ համայնքի մշակույթի տան հիմնանորոգում - 12.5 մլն դրամ, Ջովաբեր համայնքի մշակույթի տան տանիքի հիմնանորոգում - 13.8 մլն դրամ, Սևան համայնքի թիվ 6 միջն դպրոցի հիմնանորոգում - 12.9 մլն դրամ, Վարսեր համայնքի միջն դպրոցի հիմնանորոգում - 10.4 մլն դրամ, Վարդենիս համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքի վերանորոգում - 37.8 մլն դրամ, Ճամբարակ համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում - 20.6 մլն դրամ, Սևան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում - 31.3 մլն դրամ, Մարտունի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում - 39.8 մլն դրամ, Կարճաղբյուր համայնքի արտաքին լուսավորության ցանցի կառուցում - 4.9 մլն դրամ, Սեմյոնովկա համայնքի արտաքին լուսավորության ցանցի կառուցում - 3.5 մլն դրամ, Լիճք համայնքի տնամերձերի ոռոգման ցանցի կառուցում - 37.9 մլն դրամ, Ն.Գետաշեն համայնքի ոռոգման համակարգի կառուցում - 4.9 մլն դրամ, Վաղաշեն համայնքի <<Օստներ>> կոչվող նորակառույց թաղամասի գազիֆիկացում -13.1 մլն դրամ, Կարմիրգյուղ համայնքի գազատարի ներքին ցանցի կառուցում - 18.7 մլն դրամ, Մարտունի հիվանդանոցի տանիքի հիմնանորոգում - 8.9 մլն դրամ:
ՀՀ կառավարության 2017 թվականի 24 օգոստոսի N 1070 - Ն որոշմամբ հատկացված 2130.0 հազ. դրամով ձեռք են բերվել մարզի խոշորացված համայնքներում իրականացվելիք թվով 6 ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը: <<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի>> միջոցներով հիմնանորոգվել է Ծաղկաշեն համայնքի միջնակարգ դպրոցի շենքը՝ 147.0 մլն դրամ, 4 մանկապարտեզի շենքեր՝ 566.0 մլն դրամ, ընթացքի մեջ են 3 մանկապարտեզի շենքերի հիմնանորոգման աշխատանքները՝ 492.0 մլն դրամ, Վարդաձոր համայնքի մանկապարտեզի շենքի շինարարական աշխատանքները՝ 169.0 մլն. դրամ, Արծվանիստ համայնքի խմելու ջրագծի կառուցումը՝ 59 մլն. դրամ:

<<Ասիական զարգացման բանկի>> միջոցներովսկսվել է Գավառ քաղաքի N 2 հիմնական դպրոցի շենքի շինարարական աշխատանքները:

<<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ միջոցներով մարզում սկսվել են 4 և ավարտվել են թվով 2 ծրագրեր՝ 246,2 մլն. դրամ գումարով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ԾԻԳ-ի միջոցով իրականացվել են 5 ծրագրեր՝ 378,8 մլն դրամով:

<<Վեոլիա Ջուր>> ընկերության կողմից 2017 թվականին իրականացվել է ջրամատակարարման համակարգի բարելավման 38,5 միլոն դրամի պարտադիր կապիտալ աշխատանքներ:

Ճանապարհաշինության ոլորտում

2017 թվականի ընթացքում մարզում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պատվիրատվությամբ ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվել են Երևան-Սևան-Իջևան միջպետական նշանակության ավտոճանապարհի 13կմ, Մ4-Ծովագյուղ 0.6կմ, Գեղարքունիք համայնքի Գարեգին Նժդեհ փողոցի ասֆալտապատման և Մ4-Շորժա-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի Շորժա համայնքի վարչական տարածքում գտնվող փլված հենապատի գաբիոնապատման աշխատանքները: Նշված աշխատանքները իրականացնելու նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 1545.5 մլն. դրամ, որի արդյունքում հիմնանորոգվել են 14.2կմ ավտոճանապարհներ և գաբիոնապատվել 200 գծամետր հենապատ: Համաշխարհային բանկի միջոցներով 2017 թվականին վերսկսվել են Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման

միջպետական նշանակության ավտոճանապարհի 4.3 կմ /Ջոլաքար-Վարդենիկ հատված/, Երանոս-Ծակքար 5.3կմ և Մարտունի-Վաղաշեն-Վարդենիկ 10.5կմ մարզային նշանակության ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները: 2017 թվականի ընթացքում նշված ճանապարհների վրա կատարվել է 1492.5 մլն. դրամի ներդրում, որի արդյունքում հիմնանորոգվել է 8.1 կմ ճանապարհահատվածներ: 2017 թվականին համայնքային բյուջեների հաշվին ճանապարհների հիմնանորոգման նպատակով կատարվել է 341.9 մլն.դրամի ներդրում:Նախատեսված բոլոր ծրագրերի իրականացման արդյունքում ներդրվել է 3379.9 մլն. դրամ, հիմնանորոգվել է 27.3 կմ ճանապարհահատվածներ:

Առողջապահության ոլորտում

ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում են 38 բուժհաստատություններ, որոնք մարզպետարանի ենթակայության են (3 բժշկական կենտրոն, 2 պոլիկլինիկա, 1 հիվանդանոց, 1 ծննդատուն, 1առողջության կենտրոն, 30 ամբուլատորիաներ և առողջության առաջնային պահպանման կենտրոններ /ՊՈԱԿ-ներ/), 53 ԲՄԿ-ներ: 2017 թվականին մարզում գրանցվել է 2221 ծնունդ:
Մարզի մահճակալային ֆոնդը 335 է,մահճակալային տարեկան զբաղվածությունը՝ մոտ 286 օր:2017թ. գլոբալ բյուջեն կազմել է 2.722.011.400 դրամ ,որից հիվանդանոցային՝ 1.027.011.400 դրամ.իսկ արտահիվանդանոցային՝ 1.695.000.000 դրամ: 2018 թ. գլոբալ բյուջեն կազմում է 2.618.916.00 դրամ:
Աշխատավարձի ֆոնդը կազմում է շուրջ գլոբալ բյուջեի 75 տոկոսը: 2017թ. մարզի բժշկական կազմակերպություններում վճարովի ծառայության և այլ մուտքերը կազմել են 225,9մլն դրամ, որը կազմում է գլոբալ բյուջեի 6,1%, 2018 թվականի նախատեսվում է 316,1մլն. դրամ վճարովի ծառայություններ և այլ մուտքեր, որը կկազմի գլոբալ բյուջեի 8,2%-ը:
Մարզի բժշկական կազմակերպություններում աշխատողների թիվը 1506 է,որից 1096-ը՝ բուժաշխատող, 155-ը՝ վարչական և 254 սպասարկող անձնակազմ:

Սոցիալական ապահովության ոլորտում

Մարզի ազգաբնակչության շուրջ 37013 կենսաթոշակառուներ են, որից 15723 հաշմանդամներ են: Մարզում զինվորական կենսաթոշակ են ստանում 317 հաշմանդամ: 2017թ. մարզում ընտանեկան նպաստ են ստացել 12987/միջին ամսեկան/ ընտանիք, իսկ միանվագ դրամական օգնություն՝ 760 ընտանիք:
Մարզի Սևան և ճամբարակ քաղաքներում գործում են բարեգործական 2 ճաշարաններ՝ 149 շահառուներով: 2017 թվականի հուլիս - օգոստոս ամիսներին պետբյուջեի հաշվին մարզի 307 առավել անապահով, զոհված և վիրավոր ազատամարտիկների, ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքների երեխաներ անվճար կարգով հանգստացել են Հանքավանի մանկական ամառային հանգստյան ճամբարներում: Մարզում գործազուրկ են 5312՝ որից 195-ը հաշմանդամներ, գործազուրկներից զբաղվածության 5 տարածքային կենտրոնների աջակցությամբ մշտական աշխատանքի են տեղավորվել 459 շահառու, որից 16-ը՝ հաշմանդամներ:
2017թ. Ընթացքում ՀՀ ՊՆ-ից բնակարան ձեռք բերելու նատակով մարզի զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ թվով 27 ընտանիքների տրամադրվել են բնակարանի գնման վկայագրեր:

ՏԻՄ և տարածքային կառավարման ոլորտում

Օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսվել էր մարզի 30 համայնքներում իրականացնել պետության կողմից համայնքին պատվիրակված և պարտադիր լիազորությունների կատարման ընթացքի հսկողություն: Համայնքների խոշորացման արդյունքում մարզի Արփունք և Ջաղացաձոր համայնքներում իրավական և մասնագիտական

հսկողության չի իրականացվել: Ուսումնասիրված 28 համայնքների ուսումնասիրության արդյունքները քննարկվել են մարզպետի և մարզխորհրդի նիստերում և տրվել են հանձնարարականներ թերությունները վերացնելու ուղղությամբ: Ձեռնարկված մրջոցառումների մասին համայնքների ղեկավարները գրավոր տեղեկացրել են մարզպետարան: Այդ տեղեկանքները ուղարկվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Մեթոդական ու խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի բոլոր համայնքներին բյուջեների կազմման, նորմատիվ և այլ իրավական ակտերի ընդունման, հողի հարկի և գույքահարկի բազաների ճշգրտման, ՏԻՄ-երի որոշումների հրապարակայնության ապահովման, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի /հողեր, շենքեր-շինություններ/ տնօրինման օրինականության պահպանության, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, համայնքային ծառայության բնագավառում իրականացվող գործընթացների կատարման, համայնքների բյուջեների սեփական եկամուտների ապահովման հարցերում:Համայնքներում կազմակերպվել են մեթոդական և խորհրդատվական օգնություններ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջների կատարման ուղղությամբ:

2017թ. մարզի 24 համայնքներում հայտարարվել են 69 մրցույթներ, որոնց մասին հայտարարությունները տեղադրվել են Հայաստանի Հանրապետության ինտերնետային ծանուցումների պաշտոնական կայքում՝ www.azdarar.am և մարզպետարանի կայք էջում: Մրցույթների ժամանակացույցը կազմվել և ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Մրցույթների արդյունքում պաշտոնների են նշանակվել 54 համայնքային ծառայողներ: 15 պաշտոնների մրցույթները չեն կայացել դիմողներ չլինելու պատճառով:

2017թ. մարզում 39 համայնքների խոշորացման հետևանքով համայնքապետարանների աշխատակազմերի 139 համայնքային ծառայողների լիազորությունները դադարեցվել են: Խոշորացման արդյունքում համայնքները վերամիավորվել են և ստեղծվել է 4 համայնք: ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից հաստատվել են նշված 4 համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության 113 պաշտոնների անվանացանկ:

2017թ. մարզի 52 համայնքներում անցկացվել են ատեստացիաներ, որի արդյունքում ատեստավորվել են 121 համայնքային ծառայողներ: 2017թ. մարզի համայնքներում անցկացրած մրցույթների և ատեստացիաների, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններից ազատված համայնքային ծառայողների վերաբերյալ տեղեկատվությունները վարվում են համայնքային ծառայողների էլեկտրոնային գրանցամատյանով:

Ապահովվել է համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը, պատշաճ կերպով կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների ժամանակացույցերը:

ՀՀ Արտակարգ իրավիճակների եւ քաղպաշտպանության ոլորտներում

ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման պլանների, ծրագրերի մշակման կազմակերպման և իրականացման ուղղությամբ կատարվել են զգալի աշխատանքներ:Կատարելագործվել է մարզի աղետների ռիսկի նվազեցման ինստիտուցիոնալ բազան: ՀՀ Գեղարքունիքի

մարզպետի կողմից ընդունվել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերող 7 որոշում և 6 կարգադրություն:
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 02.02.2017թ. N 15-Ա որոշմամբ հաստատվել է ՀՀ Գեղարքունիքի մարզում 2017 թվականի ընթացքում կանխատեսվող գարնանային հեղեղումների, սելավների, սողանքների, վթարային կամուրջների փլուզման և հնարավոր քարաթափումների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների ծրագիրը և առաջարկվել է համայնքներին կատարել համապատասխան աշխատանքներ, որոնք հնարավորության սահմաններում իրականացվել են:
Մարզի 125 ուսումնական հաստատություններում մշակվել են «Աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլաններ»:
Ղեկավարվելով աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության ծրագրի դրույթներով, տեղական մակարդակում աղետների ռիսկերի գնահատման մեթոդաբանությամբ հաստատված օրինակելի ձևին համապատասխան սկսվել է մարզի 57 համայնքների «Աղետների ռիսկի նվազեցման պլանների» մշակման գործընթացը: Նախկինում նմանատիպ ուսումնասիրություններ և «Աղետների ռիսկի նվազեցման պլանների» մշակում կատարվել է մարզի 34 համայնքներում:
Տարվել են աշխատանքներ մարզի Շողակաթ համայնքի տարածքում կամավորական հրշեջ փրկարարական հենակետի ստեղծման ուղղությամբ: Այդ նպատակով իրականացվել են ուսուցողական ծրագրեր, տարածքների ընտրության և հարմարեցման աշխատանքներ:
Նախապես կազմված ծրագրերին համապատասխան մարզի համայնքներում կատարվել են արտակարգ իրավիճակների կանխմանն ուղղված հետևյալ աշխատանքները՝
- Գավառ քաղաքում կատարվել է Գավառագետի 1500մ հատվածի հունի մաքրում:
- Ճամբարակ - Ձորավանք ճանապարհի 26-րդ կիլոմետր հատվածում պայթեցման եղանակով չեզոքացվել է ճանապարհի 500մ հատվածին սպառնացող քարաթափման վտանգը
- Գավառ քաղաքում ապամոնտաժվել է հարակից տների համար վտանգ ներկայացնող կաթսայատան քայքայված ծխատարը:
- Կազմակերպվել է 2017 թ. սեպտեմբեր ամսին Վարդենիսի տարածաշրջանում բռնկված տորֆային տարածքների հրդեհների մարման աշխատանքները: Այդ նպատակով ներգրավվել են համապատասխան տեխնիկաներ ինչպես մարզի համայնքներից ու կազմակերպություններից, այնպես և ՀՀ պաշտպանության նախարարության ստորաբաժանումներից:
Մարզում ստեղծված է 10 քաղաքացիական պաշտպանության ծառայություն: ՔՊ ծառայություններում առկա են կանոնադրությունները, ճշգրտվել են ՔՊ ծառայությունների քաղաքացական պաշտպանության պլանները և համապատասխան հաշվարկային ու տեղեկատվական փաստաթղթերը:
Մարզի ՔՊ ծառայություններում ստեղծված են ՔՊ կազմավորումներ, ճշգրտվել են դրանց տեխնիկայով և գույքով ապահովման հաշվարկները:
Ձեռնարկվել են միջոցառումներ մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի գործունեությունը կանոնադրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ: Կազմակերպվել է ԱՌՆ մարզային թիմի աշխատանքները:
Ապրիլ ամսին ճշգրտվել է մարզի տարահանման պլանը: Դրա համաձայն անհրաժեշտության դեպքում մասնակի տարհանում է նախատեսված մարզի սահմանամերձ՝ 29, սողանքավտանգ՝ 6, աղետալի ջրածածկման վտանգի 6 բնակավայրերից, ուժեղ

երկրաշարժի ազդեցության գոտուց կախված հնարավոր էպիկենտրոններից 30-39 բնակավայրերից: Այդ աշխատանքները կազմակերպելու համար մարզային տարահանման հանձնաժողովից բացի մարզի բոլոր համայնքներում ստեղծված են նաև համայնքային տարահանման հանձնաժողովներ, տարահանման և ընդունման հավաքակայաններ: Ստեղծված են նաև 151 ժամանակավոր տեղակայման կետեր, 42 երկարատև բնակության կետեր: Մայիս ամսին ճշգրտվել է մարզի «Տարահանված բնակչության կենսապահովման պլանը»:
Ամբողջությամբ իրականացվել են մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգի նախապատրաստման 2017թ. հիմնական միջոցառումների պլանով նախատեսված՝ ինչպես մարզում նախատեսված քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտի միջոցառումները, այնպես էլ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից պլանավորված այն միջոցառումները, որոնցում նախատեսված է եղել Գեղարքունիքի մարզային կառույցների մասնակցությունը:

Հասարակական կարգի պահպանության ոլորտում

Մարզի տարածքում 2017թ. անցկացվել են Ազգային Ժողովի, 52 համայնքներում ՏԻՄ և համայնքների խոշորացման ընտրություններ, որի ընթացքում ապահովվել է հասարակական կարգը և հասարակական անվտանգությունը: Գիշերային ժամերին պահպանվել են քվեաթրթիկները և ընտրություններից հետո տեղափոխվել են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ: Հասարակական կարգի խախտումներ չեն արձանագրվել: 2017թ. 12 ամիսների ընթացքում Գեղարքունիքի մարզում արձանագրվել է հանցագործության 729 դեպք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 821-ի դիմաց: Բացահայտման տոկոսը կազմել է 89.7% նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 91.8%-ի դիմաց: Մարզպետի կողմից տրվել են հանձարարականներ հանցագործությունների կանխարգելման, ինչպես նաև բացահայտման տոկոսի բարձրացման ուղղությամբ:
Ամփոփվել են անչափահասների կողմից կատարված հանցագործությունների և իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ կատարված աշխատանքները: Մարզպետի 2009թ. դեկտեմբերի 30-ի թիվ 80-Ա կարգադրությամբ ստեղծվել է քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց սոցիալական վերականգնման խնդիրներով զբաղվող հանձնաժողով, որը սերտորեն համագործակցվում է ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ:
Հանրապետական գործադիր մարմինների հետ համագործակցությունը ապահովվել է անհրաժեշտ մակարդակով և ըստ անհարժեշտության նրանց քննարկման է ներկայացվել վերջիններիս իրավասությանը վերաբերող մարզին առնչվող հարցերը:
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի՝ ՔՊ ղեկավարի հրամանով մարզի տարածքում անցկացված քաղաքացիական պաշտպանության <<Արտակարգ իրավիճակներում գործելու>> թեմայով անցկացված հրամանատարաշտաբային ուսումնավարժությունների ընթացքում ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության և ենթակա ստորաբաժանումների անձնակազմը պատշաճ կարգով կատարել է իր առջև դրված խնդիրները:
Ի կատարումն մարզպետի 21.02.2017թ. <<2001թ. ծնված երեխաների կցագրում անցկացնելու մասին>> թիվ 31-Ա որոշման, համայնքային ոստիկանության տեսուչների կողմից համայնքներում իրականացվել են համապատասխան աշխատանքներ, ապահովվել է փոխհամագործակցությունը զինկոմիսարիատների հետ: Մարզում ամառային զորակոչը

անցկացվել է բարձր մակարդակով, բանակ են զորակոչվել նախատեսված 614-ի փոխարեն 624 զորակոչիկ: Զինակոչի օրերին զինկոմիսարիատների տարածքում ապահովվել է հասրակական կարգը, զորակոչից խուսափող անձինք հայտնաբերվել և ներկայացվել են համապատասխան զինկոմիսարիատներ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և զարգացման ոլորտում

Մարզի քաղաքային և 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղական համայնքապետարաններում ներդրվել է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը(ՀԿՏՀ): Մարզի քաղաքային և 3000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղական համայնքապետարաններն ունեն համացանցային պաշտոնական կայք: Մարզի բոլոր համայնքապետարաններում առկա է համացանցին միացված առնվազն մեկ համակարգիչ:

Ներդրումային ծրագրերի ոլորտում

2017 թվականին Գեղարքունիքի մարզում միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների գործունեությունը նպատակաուղղված է եղել մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը և առաջնահերթ խնդիրների իրականացմանը: 2017թ. իրականացվել են շուրջ 10,8 մլրդ.դրամի ծրագիր, որից մասնավոր հատվածում կատարված ներդրումները կազմում է 7մլրդ. 8մլն.դրամ:
Արդյունքում ստեղծվել է շուրջ՝ 440 աշխատատեղ՝ 320 հիմնական և 120 ժամանակավոր:
Մարզում ծրագրերն իրականացվել են հիմնականում միջազգային կազմակերպությունների, ՀՀ պետական բյուջեի և մասնավոր հատվածի կողմից՝ <<Համաշխարհային բանկի>>, <<Վորլդ Վիժն Հայաստան>>, <<Հայաստան Համահայկական հիմնադրամի>>, <<Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի>> /Եվրոպական ներդրումային բանկի/ Եվրոպական Միության, <<Ասիական զարգացման բանկի>>, Գյուղատնտեսության նախարարության զարգացման հիմնադրամի և այլ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների կողմից):

Զբոսաշրջության խթանման և զարգացմանն ուղղված ծրագրեր

Սևան համայնքը անդամակցել է ԵՄ «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրին, մասնակցել ծրագրի պիլոտային նախագծեր դրամաշնորհային մրցույթին և ճանաչվել հաղթող, որի արդյունքում 2018-2019թթ. համայնքում կիրականացվի «Նորարարության խթանման կայուն հարթակ» ծրագիրը: Բյուջեն 538.577 եվրո /ԵՄ ֆինանսավորում՝ 89.12%, համայնքային ներդրում՝ 10.88% /: Ծրագրի արդյունքում նախատեսված է բիզնես կենտրոնի ստեղծում, որը նպաստելու է գործարար միջավայրի բարելավմանը, զբոսաշրջային հոսքերի ավելացմանը, ներդրումների ներգրավմանը և աշխատատեղերի ստեղծմանը:

Զբոսաշրջության խթանման և զարգացման նպատակով մարզպետարանի և այլ կազմակերպությունների համագործակցությամբ իրականացվում է մարզում զբոսաշրջության զարգացման ծրագրեր՝ /գ.Կալավան, գ.Մարտունի, Սևան թերակղզում բացված շարժական զբոսաշրջային գրասենյակ, Մարտունու կանանց խորհուրդ հ/կ, Վարդենիսի Արեգունի հ/կ և Գավառի երիտասարդական նախաձեռնող խումբ և այլն/:

Սևանի զբոսաշրջության տեղեկատվական գրասենյակի փոխանցմամբ՝ արդեն ամփոփվել է այս տարվա աշխատանքը: «35 երկրից 83.044 զբոսաշրջիկ է այցելել Սևանա թերակղզի:
Հուլիսի սկզբից Սևանում մեկնարկել է «Տուրիզմ ստարտափ» եռամսյա ծրագիրը, որն իրականացվում է «Տեխնոդրոմ» ՀԿ-ի կողմից:

IRAPA հարթակը, որում միավորում է հայաստանյան և Ֆրանսիական 8 համայնք, համագործակցում են զբոսաշրջության ոլորտում: Հարթակում ընդգրկված են ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, Սևան և Վարդենիս քաղաքները: Համագործակցության շրջանակներում իրականացվում են զբոսաշրջության տարբեր ծրագրեր: Իրականացվել և ընթացքի մեջ են զբոսաշրջության ոլորտին աջակցող դրամաշնորհայի ծրագրեր:

«Թայմ լենդ» հիմնադրամի կողմից իրականացվում են Կալավանի զարգացման ծրագրեր, որը նպաստում է համայնքում զբոսաշրջության զարգացմանը՝ գիշերակացերի կառուցման գործում: 2017 թվականի հուլիս ամսվա դրությամբ գնվել են 13 բնակելի տներ (երկար տարիներ չբնակեցված) և շուրջ 15 000 000 ՀՀ դրամ արժողությամբ հողատարածքներ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի և այլ երկրների համապատասխան տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն և միջազգային կապերի ոլորտում

ՀՀ Գեղարքունիքի մարզի և Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտալ խորհրդի միջև 2004 թվականից սկսած պարբերաբար կնքվել են փոխշահավետ հարաբերություններ զարգացնելու պայմանագրեր, որոնց շրջանակներում իրականացվում են տուրիզմի զարգացման /ներառյալ գյուղական տուրիզմ/, առողջապահության և ֆրանկոֆոնիայի /ֆրանսերեն լեզվի տարածում/ ոլորտային ծրագրեր:
2016 թվական հոկտեմբերի 14-ին ՌԴ Օմսկի մարզի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ղեկավարությունների միջև կնքվել է համագործակցության համաձայնագիր: 2017 թվական հոկտեմբերի 24-ին ՀՀ Երևան քաղաքում ՌԴ Սարատովի մարզի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ղեկավարությունների միջև կնքվել է արձանագրություն մտադրությունների մասին:

Զբաղվածության ոլորտում

2017թ. ՀՀ Գեղարքունիքի մարզում գործել է շուրջ 27 արտադրական կազմակերպություն: Խոշոր արտադրական ձեռնարկություններից մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն «ԳեոՊրոՄայնինգ>> -ն ,,Աքվատիկ,, ՍՊԸ-ն, ,,Սևանի հացի գործարան,, ՍՊԸ-ն, ,,Հրանդ Կարապետյան,,ՍՊԸ-ն և այլն:
2017թ. մարզում գործել են 499 մանրածախ առևտրի օբյեկտներ՝ շուրջ 1526 աշխատողներով, որոնց առևտրաշրջանառությունը կազմել է 22 951.6մլն. դրամ:
Գործել են նաև սպառողական ապրանքների 2 և գյուղատնտեսական արտադրանքի 1 շուկաներ: Վերջիններիս առևտրական շրջանառությունը 2017 թվականի ընկած ժամանակահատվածում կազմել է համապատասխանաբար՝ 1738.3 մլն.դրամ և 188.8 մլն. դրամ: Ծառայությունների ծավալը 2017 թվականին կազմել է 19 278.6. մլն. դրամ: Մարզում գործում են 67 հանրային սննդի, 81 կենցաղային ծառայության օբյեկտներ, որտեղ աշխատում են 2982 մարդ :

Մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թիվը կազմել է շուրջ՝ 138,3 հազար մարդ, որից՝ զբաղվածների թիվը շուրջ 127,7 հազար մարդ, այդ թվում՝ շուրջ 55 000 գյուղացիական տնտեսություններ:
Գործազուրկների թիվը 2017 թվականին կազմել է, ըստ մարզի զբաղվածության կենտրոններում գրանցվածների՝ շուրջ 5413 մարդ, իսկ աշխատանք փնտրողների թիվը՝ շուրջ 6395 մարդ: 2016թ. տվյալներով աղքատության մակարդակը կազմում է 28.8 %:

Իրավական ոլորտում

ՈՒսումնասիրվել և իրավական փորձաքննության են ենթարկվել մարզի համայնքների կողմից մարզպետարան ներկայացված համայնքների ավագանիների ընդունած թվով 1652 որոշումները: Արդյունքում 30 որոշումներ, պարզաբանմամբ, վերադարձվել են համապատասխան համայնքապետարաններ՝ կայացված որոշումները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու համար: Համայնքների ավագանիների որոշումները ժամանակին չներկայացնելու կամ ոչ պատշաճ ձևակերպումներ տալու համար 10 միջնորդագրեր են ներկայացվել համայնքների ղեկավարներին՝ աշխատակազմերի քարտուղարներին կարգապահական տույժի ենթարկելու համար: ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարաններ են ներկայացվել թվով 9 հայցապահանջներ: Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների հետ իրավաբանական բաժինը մասնակցել է քաղաքացիների դիմում-բողոքների ուսումնասիրություններին՝ պատասխանելով քաղաքացիների կողմից ներկայացված 70 դիմում-բողոքների:

Ներքին աուդիտի ոլորտում աշխատանքները, համաձայն ներքին աուդիտի տարեկան ծրագրի, կատարվել են մարզի առողջապահական և կրթական կազմակերպություններում: Աուդիտի են ենթարկվել կազմակերպությունների գործունեության տարբեր ոլորտները, այդ թվում՝ ֆինանսատնտեսական գործունեությունը, միջոցների օգտագործման արդյունավետությունը, աշխատավարձերի հաշվարկման և վճարման ճշտությունը, գնումների գործընթացի կազմակերպումը, ֆինանսական ցուցանիշները:
Գնահատվել են ֆինանսական վիճակը, ներկայացված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը և այլ հարցեր: Իրականացված աուդիտների ընթացքում գնահատվել են ներքին վերահսկողության համակարգերը և ռիսկերի կառավարման գործընթացների հուսալիությունը և արդյունավետությունը: Կազմակերպություններին տրվել են հանձնարարականներ և ներկայացվել են առաջարկություններ արձանագրված թերությունները և բացթողումները վերացնելու ուղղությամբ: Կազմակերպություններին տրամադրվել են խորհրդատվական ծառայություններ՝ իրականացվող ֆինանսատնտեսական բնույթի գործառույթների և կառավարչական գործընթացները բարելավման համար:

Զորահավաքային նախապատրաստության ոլորտում

Սահմանված կարգով և ժամկետներում անցկացվել են 3 շտաբային մարզումներ և արդյունքները ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարություն: Ներկայացվել է 2018 թվականի շտաբային մարզումների ժամանակացույցը: ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի համապատասխան վարչության հետ համատեղ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված նոր մեթոդաբանությամբ մշակվել և հաստատվել է Գեղարքունիքի մարզը խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի անցման պլանը, ըստ անհրաժեշտության

փոփոխություններ են կատարվել մարզի զորահավաքային մարմնի կազմում, ինչպես նաև թարմացվել և ճշգրտվել են մարզի, համայնքների և զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների զորահավաքային պլանները: Պաշտպանության բնագավառի իրավական ակտերի պահանջների կատարման նպատակով վարչական վերահսկողություն է իրականացվել մարզի 6 համայնքներում, որոնցում արձանագրված բացթողումները կամ լրացվել են տեղում կամ տրվել են ժամկետներ՝ դրանք շտկելու ուղղությամբ: Համայնքների ղեկավարների հետ աշխատանքներ են տարվել՝ զինկոմիսարիատների հետ կապը ակտիվացնելու ուղղությամբ, զինապարտների հաշվառման գործընթացը ըստ պատշաճի կազմակերպելու համար: Զինվորական կոմիսարիատների հայտերի համաձայն տրամադրվել են շենքեր, շինություններ և տարածքներ՝ զինապարտների և տեխնիկայի նախնական հավաքակետեր ծավալելու նպատակով, ինչպես նաևհաստատվել են զինվորական կոմիսարիատների կողմից զորահավաքային միջոցառումների ծրագրերը: ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 27-ի N657-Ն որոշման 17 կետի պահանջների համաձայն՝ հաշվառման լրիվությունն ապահովելու նպատակով կազմվել և մարզի ու Հայաստանի Հանրապետության այլ զինվորական կոմիսարիատներ են ներկայացվել Գեղարքունիքի մարզպետարանի զինապարտ աշխատակիցների ցուցակները՝ ըստ հաշվառման վայրի: Մարզի զինվորական կոմիսարիատների հետ սահմանված կարգով իրականացվել են մարզպետարանի և ենթակա կազմակերպությունների աշխատակիցների ամրագրման աշխատանքները: 2000թ.ծնված, Հայաստանում գտնվող, բայց չկցագրված պատանիներին հայտնաբերելու և կցագրման ներկայացնելու հարցով զինվորական կոմիսարիատների և համայնքների ղեկավարների հետ կատարվել են համապատասխան աշխատանքներ,որոնց արդյունքում մեկ տասնյակից ավելի պատանիներ ներկայացել են հաշվառման: Տվյալները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշումներով կազմակերպվել են 2017թ. ամառային և ձմեռային զորակոչերի հետ կապված աշխատանքները: 2017թ. ամառային զորակոչի առաջադրանքը կատարվել է 102 տոկոսով,ձմեռայինը՝ 106 տոկոսով: Կազմվել և ըստ պահանջի ներկայացվել է անխուսափելի իրավիճակներում էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման ենթակա կազմակերպությունների, ինչպես նաև մարզի համայնքներում պահեստային կառավարման կետերի ցանկը: Մշտական վերահսկողություն է իրականացվել մարզի համայնքներում այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող անձանց աշխատանքների,ինչպես նաև զորացրման, զինվորական կոմիսարիատներում հաշվառման և այլ իրավահարաբերությունների նկատմամբ:

Հանրային իրազեկման ոլորտում

Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետկապերի բաժինը Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքի (gegharkunik.mtad.am)վարման միջոցով հաշվետու ժամանակահատվածում ապահովել է մարզպետարանի տեղեկատվական քաղաքականությունը: Բաժնի գործունեության արդյունավետ իրականացմանը նպաստել է նաև բաժնի համագործակցությունը մարզային և հանրապետական ԶԼՄ-ների և մարզում ակտիվ գործունեություն իրականացնող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ :
Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում պարբերաբար և ըստ անհրաժեշտության իրականացվել են մարզպետի և մարզպետարանի կենսագործունեության

վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքներ՝ տեղեկատվական բնույթի նյութերի, մամուլի հաղորդագրությունների,ուղերձների, հաշվետվությունների, ծրագրերի, հայտարարությունների և այլ բնույթի նյութերի պատրաստմամբ և հրապարակմամբ: Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից կազմակերպվել են մարզպետի մամուլի ասուլիսներ, մարզի համայնքներում հրատապ լուծում պահանջող, ինչպես նաև սոցիալ - տնտեսական բնույթի տարբեր խնդիրների վերաբերյալ անցկացվել են հարցազրույցներ, հրապարակումներ: Բաժնի աշխատակիցները մասնակցել են տարբեր վերապատրաստումների, քննարկումների և խորհրդակցությունների, մարզի զարգացման ռազմավարության մշակմանը, իրականացրել այլ գործառույթներ՝ Քաղաքացիական ծառայությանմասին ՀՀ օրենքով բաժնին վերապահված լիազորությունների սահմաններում:
Մարզպետարանի պաշտոնական կայքում օրենքով սահմանված կարգով տեղադրվել են տեղեկատվական բնույթի նյութեր՝ Գեղարքունիքի մարզի խորհրդի նիստերի վերաբերյալ: Բաժինն իրականացրել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի՝ մարզի համայնքներ կատարած աշխատանքային այցերի, հանդիպումների, քաղաքացիների ընդունելությունների, մարզպետարանում անցկացվող խորհրդակցությունների, քննարկումների, բանակցությունների, մարզ ժամանած ՀՀ և օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնատար անձանց և պատվիրակությունների ացերի լուսաբանումը: Մարզի համայնքների, մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեության հրապարակայնության ապահովման նպատակով բաժինն համագործակցել է մարզային և հանրապետական ԶԼՄ-ների հետ՝ պարբերաբար տրամադրելով անհրաժեշտ և հրապարակման ենթակա տեղեկատվություն:
2017 թվականին ԶԼՄ-ներից, հասարակական կազմակերպություններից, անհատ քաղաքացիներից Գեղարքունիքի մարզպետարանին հասցեագրված բոլոր գրավոր և բանավոր հարցումներինպատասխան է տրվել օրենքով սահմանված կարգով և ժամկետում, գրավոր հարցումները և դրանց պատասխանները տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում: Կայքում հրապարակվել են մարզի համայնքների ավագանիների որոշումները,համայնքային բյուջետային եկամուտների՝ ամսեկան ու ծախսերի՝ եռամսյակային տվյալները,տեղեկատվություն՝ մարզպետարանի կողմից մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ, մարզպետարան հասցեագրված դիմումների, դրանց վիճակագրության, զարգացման ծրագրերի և հանրային իրազեկման ենթակա այլ նյութեր:
2017 թվականին հրատարակվել է մարզային ,,Գեղամա աշխարհ,, պաշտոնաթերթի 33 համար, 500 լրատվական բնույթի նյութ է թողարկվել ,,Արմենպրես,, լրատվական գործակալության միջոցով:Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից 2017 թվականին մոտ 130 լրատվական բնույթի տեսանյութեր են ցուցադրվել Հանրային և մարզային հեռուստաընկերությունների միջոցով, որտեղ արտացոլվել են պետական բյուջեի և միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից մարզի համայնքներում կատարված ներդրումային ծրագրերը, համայնքային հիմնախնդիրները, մարզի և մարզպետարանի կենսագործունեությանը վերաբերող հարցեր :

Անձնակազմի կառավարման ոլորտում

Գեղարքունիքի մարզպետարանի կողմից հայտարարվել էՀայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի փակ բաժնետիրական ընկերությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների 10 մրցույթ, որից 4-ը չի կայացել:

Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմում անցկացվել է քաղաքացիական ծառայողների 8 մրցույթ, վերապատրաստվել են 41 քաղաքացիական ծառայողներ:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում բաժինը սերտորեն համագործակցել է մարզի համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ:2017թ հայտնաբերել և հաշվառել է առանց ծնողական խնամքի մնացած 5 երեխա: Մարզում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների ընդհանուր թիվը կազմում է 428 երեխա: 2017թ. կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված 7 երեխաներ վկայագրվել են հանրապետության տարբեր հատուկ դպրոցներում, իսկ 12 երեխայի տրվել են վկայագրեր՝ իրենց կրթությունը շարունակելու ներառական ուղղությամբ: Գավառի մանկատանը խնամվում են 54 երեխաներ, 2017թ. մանկատնից կենսաբանական ընտանիքներ են տեղափոխվել 2 երեխաներ: ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության կողմից ներկայացված տվյալների հիման վրա ձևավորվել է մարզի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասներին վերաբերող մարզային շտեմարան, որտեղ 2017թ. հաշվառված է 11 անչափահաս իրավախախտ երեխա: 2010թ. մարտից, համագործակցելով <<Նորք>>տեղեկատվական վերլուծական կենտրոնի հետ, կատարվում է մարզի տարածքում հայտնաբերված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառում և մուտքագրում: 2017թ. հաշվառվել և մուտքագրվել է 26 երեխա, իսկ հաշվառման բազայից դուրս է հանվել 9 երեխա: 2017թ որպես որդեգրման ենթակա երեխաներ կենտրոնացված հաշվառման են վերցվել 4 երեխաններ, իսկ որպես որդեգրել ցանկացող անձ կենտրոնացված հաշվառման են վերցվել 6-ը՝ որպես որդեգրողի թեկնածուներ: Բաժնի կողմից մշակվել է ՀՀ Գեղարքունիքի մարզում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021թվականների ռազմավարական ծրագրերի իրականացման միջոցառումների պլան եւ Գեղարքունիքի մարզում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2017-2021թվականների միջոցառումներ ծրագիր: Բաժնում կատարվել է մոտ 54 քաղաքացիների դիմումների ընդունում, որի ընթացքում տրվել են համապատասխան ընթացք, ցուցումներ և խորհրդատվություններ տարբեր հարցերի շուրջ՝ սոցիալական, հոգեբանական, մանկավարժական, իրավաբանական: Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ կազմակերպվել են այցելություններ Գավառի մանկատուն, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար տոնական մթնոլորտի ձեւավորում, հյուրասիրություններ:

Նամակների եւ քաղաքացիների ընդունելության ոլորտում

2017 թվականին մուտք է եղել 14027 փաստաթուղթ, որից 2365 դիմում, եւ ելք՝ 6411 փաստաթուղթ: 2365 դիմումներից 865-ը եղել են դրամական օգնության, 198-ը՝ աշխատանքի տեղավորման, 148-ը առողջարանային ուղեգիր ձեռք բերելու, 158-ը պետական պատվերի շրջանակում բուժումը կազմակերպելու, 87-ը՝ բնակարան ձեռք բերելու, 76-ը՝ բնակարանի վերանորոգման, 27-ը՝ սոցիալական նպաստի, 806-ը՝ այլ բնույթի՝ արձակուրդի, ՌԴ մուտքի արգելքի, երեխայի ներառական կրթության տալու, երեխայի որդեգրման, ծննդօգնության հավաստագիր ստանալու, տնամերձերի, ջրագծերի, գազատարների, հողատարածքների և այլ խնդրահարույց հարցերի ու տեղեկատվություն տրամադրելու մասին: Մարզի թվով 805 քաղաքացի ստացել է դրամական օգնություն, 131 քաղաքացի ապահովվել է աշխատանքով, 112-ը ստացել են առողջարանային ուղեգիր, 99-ը բուժվել են պետական պատվերի

շրջանակում: Դիմումներից 342-ը ուղղված են եղել վերադաս պետական մարմիններին՝ ՀՀ Նախագահ՝63, ՀՀ վարչապետ՝ 210, ՀՀ ԱԺ՝2, ՀՀ ՏԿԶՆ՝42, ՀՀ այլ նախարարություններ՝17, ՀՀ ՄԻՊ՝4, առաջին տիկնոջ գրասենյակ՝ 4, որոնք վերահասցեագրվել են ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան: Մարզպետը տարվա ընթացքում ընդունել է 450 քաղաքացու:
ՀՀ Գեղարքունիքի մարզպետը կայացրել է 386 որոշում, որից 384-ը անհատական, 2-ը՝ նորմատիվ: ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից արձակվել է 334 կարգադրություն: